ՀՏԴ 37 (091)

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՐՑԱԽԻ ԴՌՆԱՎԱՐՁ-ԿԱՐՄԻՐ ԳՅՈՒՂՈՒՄ (19-21 դդ.)

Լենա Սուլեյմանյան
Մեսրոպ Մաշտոց Համալսարան
Արցախ

Անոտացիա

1841թ-ին Արցախի Վարանդա գավառի Դռնավարզ-Քեշիշքենդ հին գյուղում դրվում է Սուրբ Աստվածածին եկեղեցու հիմնարկեքը, որին կից սկսում է գործել առաջին նախակրթարանը: Եկեղեցու և դպրոցի առկայությունը հիրավի լուսավորչական հեղափոխություն են մտցնում գյուղի առօրյայում: Այդուհետ՝ Դռնավարզը արցախյան գյուղերի շարքում առանձնանում է որպես հոգևոր կրթարան: 20-րդ դարում արցախահայությանը և գյուղին պատուհասված ծանր ու դաժան փորձությունների պայմաններում անգամ ծխականից միջնակարգի կարգավիճակ ձեռք բերած դպրոցում կրթական գործը բավարար ու պատշաճ հիմքերի վրա էր գտնվում: Արդի ժամանակներում գյուղն ու դպրոցը ստիպված են դիմակայելու ներկա սոցիալ-տնտեսական մարտահրավերներին:

Բանալի բառեր *՝ նախակրթարան, ծխական դպրոց, դպրոցաշինություն, միգրացիա, միջնակարգ դպրոց, աշակերտների թվակազմ:*

19-րդ դարում տեղի ունեցած պատմական կարևոր իրադարձություններն իրենց անմիջական ազդեցությունը թողեցին Արցախում մշակութային ուղղությունների, մանավանդ՝ կրթական գործի ու դպրոցաշինության զարգացման վրա: Ռուսական համեմատաբար տանելի տիրապետության ներքո արցախահայությունը՝ շարունակելով դարերի խորքից եկող մշակութային հարուստ ավանդույթները, հիմնում էր դպրոցներ և կրթական կենտրոններ: Արցախում դպրոցական ցանցի ընդլայնմանը նպաստեց 1836թ. Նիկոլայ I-ի կողմից հաստատված «Հայ լուսավորչական հավատքի հոգևոր կառավարման կանոնադրությունը» (գործեց 1837-1917թթ.): Դրանով իրավունք էր տրվում բոլոր հայկական թեմերում եկեղեցիներին կից հիմնել մեկական ծխական դպրոց, որը պետք է բացվեր միայն հոգևոր իշխանության կարգադրությամբ**[1, էջ 65]**:

Արցախի Վարանդա գավառի Դռնավարզ-Քեշիշքենդ հին գյուղի զարթոնքը սկսվում է հենց 19-րդ դարից: Պատահական չէ, որ գյուղի տարածքում հայտնի պատմական հուշարձանների մեծ մասը նույն դարաշրջանի կառույցներ են**[13]**: 1841թ. դրվում է Սուրբ Աստվածածին եկեղեցու հիմնարկեքը: Աղբյուրները վկայում են, որ մինչև 19-րդ դարի 70-ական թվականները եկեղեցուն կից գործել է դպրոց՝ 10 աշակերտով**[4, էջ 281; 5, էջ 130]**: Եկեղեցու և դպրոցի առկայությունը հիրավի լուսավորչական հեղափոխություն են մտցնում գյուղի առօրյայում: Այդուհետ՝ Դռնավարզը արցախյան գյուղերի շարքում առանձնանում է որպես հոգևոր կրթարան, իսկ գյուղից սերված քահանաները հոգևոր-կրթական գործունեություն են ծավալում նաև գավառի տարբեր բնակավայրերում:

1860-70-ական թթ. Արցախի թեմում բացված եկեղեցական ծխական և մասնավոր դպրոցների ցանկում հիշատակվում է Դռնավարզի նախակրթարանը, որն ուներ մեկ դասարան, 20 աշակերտ, մեկ ուսուցիչ**[4, էջ 83]**: Այս մասին հանգամանորեն տեղեկանում ենք Արցախի

հայտնի մանկավարժ Սամվել Ղուկասյանի անտիպ հուշերից, ով 1935թ. ուսուցչություն է արել Կարմիրգյուղում: Այսպես, 1866-67 ուստարում 20 երեխայի ընդգրկմամբ գործել է դպրոց, և համագյուղացի Պետրոս Տեր-Մանվելյանը (ծնվ.1858թ., ապրել է 107 տարի) վկայում է, որ ինը տարեկան հասակում սովորել է այդ դպրոցում, որի ուսուցիչը եղել է իր պապը՝ Պողոս Տեր-Մանվելյանը: Վերջինս կրթություն է ստացել Ամարասի հոգևոր դպրոցում, ձեռք բերել ժամանակի պահանջներին համապատասխան պատշաճ գիտելիքներ**[8]**:

Արխիվային նյութերից տեղեկանում ենք, որ 1873թ. գյուղի հասարակությունը խնդրանքով դիմում է կաթողիկոսին՝ գյուղում բացելու ծխական դպրոց: 1874-1875 ուսումնական տարում գյուղի նորաբաց եկեղեցական ծխական դպրոցի երկու բաժանմունքներում սովորում են 55/56 աշակերտ, չորսը՝ անվճար: Դպրոցի բացմանն ու ապահովմանը մասնակցում են գյուղի բնակչությունը և հայոց բարեգործական ընկերության առանձին անդամներ: Ս. Ղուկասյանը տեղեկացնում է, որ դպրոցահասակ երեխաներ շատ կային, բայց զուրկ էին նյութական միջոցներից: Արդեն 1887-1888 թթ. դպրոցն ուներ 57 աշակերտ, և մեկ ուսուցիչ, իսկ 1892-93 ուստարում 59 աշակերտ և երկու ուսուցիչ: Դպրոցը կոչվում էր Ս.Պողոս-Պետրոսի անունով**[4, էջ 281]** (հետագայում գյուղում ուսումնատենչ սովորողներին կատակով Պողոս-Պետրոս էին անվանում, և ոչ անհիմն): Մ. Բարխուդարյանի տվյալներով 1894թ. Դռնավարզում գործում էր «տղայոց միդասյան ուսումնարան, աշակերտ 65, թոշակատու 60, տարեկան վարժապետին 250 ռուբլի» **[3, էջ 85]:**

Հայկական դպրոցների հանդեպ տարված քաղաքականության արդյունքում, սակայն, խոստումնալից ապագա ունեցող այս կրթօջախը 1896 թ. նույնպես փակվում է: Ղարաբաղի թեմի եկեղեցիների, վանքերի, հոգևոր-կրթական հաստատությունների մասին 1901թ. տեղեկություններում Դռնավարզում միայն հիշատակվում է մեկ եկեղեցի, երեք եկեղեցական, եկեղեցի հաճախողներ՝ 801 տղամարդ և 612 կին**[7, էջ 403]:**

1906թ. վերաբացված դպրոցը գործում է արդեն երեք բաժանմունքով: 1908-09թթ. Արցախի թեմում գործող դպրոցների ցանկում հիշատակվում է Դռնավարզի միդասյա երկսեռ դպրոց, երեք դասարան, տղա՝ 28, աղջիկ՝ 33, վարժուհի մեկ**[4, էջ 141]:** Ուսուցչուհին էր տիկին Շուշանիկ Տեր-Մարտիրոսյանը: Դպրոցը պահվում էր մշակութային միության նպաստով (տարեկան 200 ռ.) և սովորողների ուսման վարձով ու բնակչության նյութական միջոցներով: Այն իր գոյությունը պահպանել է մինչև Ղարաբաղում խորհրդային իշխանության հաստատումը**[4, էջ 281-282]:** Այդ տարիներին դպրոցում դասավանդել են Նոր շենից Միքայել վարժապետը և շոշեցի Միկիտ վարժապետը: Դպրոցում դասավանդում էին կրոն, տոմարագիտություն, հայոց պատմություն, ռուսաց լեզու, մաթեմատիկա, երգեցողություն, վայելչագրություն**[8]:**

1911-12թթ. Ղարաբաղի թեմի հայ ազգաբնակչության, հագևոր-վարչական, դպրոցական և կալվածական դրության մասին համառոտ տեղեկագրի համաձայն Դռնավարզը մտնում էր Վարանդայի Գ մասի գործակալության մեջ, ուներ եկեղեցական միդասյան դպրոց, որը պահվում էր թոշակով, մասամբ՝ հասարակական տուրքով**[7, էջ 553]:** Նույն թվականի համար մամուլից տեղեկանում ենք, որ Դռնավարզի դպրոցն ունի երկու բաժանմունք՝ 65 սովորողով, որոնցից 33-տղա, 32-աղջիկ: Դասատուն է պ. Միքայել Տեր-Հովհաննիսյանը, որն ավարտել է Շուշիի թեմականի IV-ը, ստանում է 450 ր. ռոճիկ և բնակարան, ծառա, վառելիք և լույս: Դպրոցի ծախսերը հոգացվում են աշակերտական թոշակներից (3ր.50կ.), ծխական տուրքից (170ր.), Կ.Միության նպաստից (180ր.): Դպրոցը չունի սեփական շենք , վարձովի է, չունի գրադարան, ստանում է մի հայերեն թերթ**[14]:** Ուշագրավ է այն փաստը, որ Բաքվի Հայոց Կուլտուրական Միության կրթական սեկցիան նիստերից մեկում որոշում է 1912-1913 ուստարվանից

Վարանդայի հինգ գյուղերում, այդ թվում և Դռնավարզում, հինգամյա դասընթացով կենտրոնական դպրոցներ բացել, որտեղ շրջակա գյուղերի միդասյան դպրոցների սաները պիտի շարունակեն իրենց ուսումը: Դռնավարզցիները առանձնակի ուրախությամբ են ընդունում լուրը և որոշում են կառուցել դպրոցական նոր շենք. նախկին 25 տարի գոյություն ունեցող դպրոցը տեղափոխվում էր այս ու այն տուն, որ խոնավ էր ու մութ: Այս նպատակով ընդհանուր ժողով են հրավիրում՝ կամենալով դիմել օտար վայրերում ապրող հարուստ դռնավարզցիներին, խնդրել օգնություն, հուսալով, որ «չեն խնայի նրանք իրենց լուման ձգելու այս հանրաշահ հիմնարկության աղքատիկ գանձարանի մեջ» **[13]:** Բայց շուտով հայ ժողովրդին, նաև՝ արցախյան հատվածին պատուհասում է առաջին Աշխարհամարտը, նախաձեռնված դպրոցաշինության գործընթացը մնում է անավարտ: Չնայած ծանր ու դժվարին ժամանակներին, անգամ 1918-19թթ.՝ ի թիվս այլ գյուղերի, Դռնավարզում ուսումնական գործը բավարար հիմքերի վրա էր գտնվում **[4, էջ 148; 1, էջ 367]:**

Պատերազմի ավարտից հետո Արցախը ստիպված էր դիմադրելու խորհրդա-մուսավաթական դավադրությանը: Անհավասար պայքարում ավերվեցին շեն բնակավայրեր, մարդկային կորուստն աննախադեպ էր: 1918-1921թթ. ընթացքում մոտ 2000 բնակիչ ունեցող Դռնավարզը շուրջ 150 զոհ ունեցավ, մասսայականը խորհրդային անվանված Ադրբեջանի իշխանությունների իրականացրածն էր՝ 80-ից ավելի մարդ **[6, էջ 166-171]:** 1922թ. Արցախի Հայոց Թեմի գավառների, գյուղերի և ժողովրդի վիճակագրական համառոտ տեղեկագրի համաձայն Դռնավարզն ուներ 200 տուն, ընդամենը 1200 բնակիչ՝ 630 տղամարդ, 570 կին **[7, էջ 766]:** Այս ցուցանիշները հայտնի քաղաքականության արդյունքն են: Ավելին, 1923թ. Ղարաբաղում հացամթերման պետական պլանը առաջինը կատարելու համար այն ժամանակվա կառավարության որոշմամբ Դռնավարզն էլ վերափոխվում է Կարմիրգյուղի:

Խորհրդային ժամանակաշրջանում փոխվում է դպրոցի ձևն ու բովանդակությունը. դպրոցն անջատվում է եկեղեցուց, ստեղծվում է միասնական համակարգ: 1920-26թթ. գյուղում գործում էր տարրական, 1927-1935թթ.՝ յոթնամյա դպրոց: Վարիչի պաշտոնում աշխատել են Երվանդ Բաղալյանը, Համազասպ Ղուկասյանը, Աշոտ Սարգսյանը, Գուրգեն Գևորգյանը: Մինչև 1931-32 ուստարին պարապմունքները կազմակերպվում էին մասնավոր տներում (Դերունց, Ասրունց, Էրմունց): 1929 թ. դրվում է դպրոցական տիպային շենքի հիմքը, որի կառուցումն ավարտվում է 1932թ., հունվարից պարապմունքներն անցկացվում էին նոր շենքում: 1935-36 ուստարում փոխվում է դպրոցի տիպը՝ յոթնամյան դառնում է միջնակարգ-գիշերօթիկ**[8]:**

Այս հաջողությունները պայմանավորված են 1930թ. «Ընդհանուր պարտադիր տարրական կրթություն մտցնելու մասին» որոշման հետ, ինչի հիման վրա Լեռնային Ղարաբաղի մարզային գործադիր կոմիտեն որոշել էր մարզում մտցնել ընդհանուր տարրական պարտադիր կրթություն**[4, էջ 351]:** Մամուլի էջերից տեղեկանում ենք, որ 1932թ. գյուղի բոլոր դպրոցահասակ երեխաներն ընդգրկված էին դպրոցում, վեց խմբակներում կային 196 աշակերտներ: Գյուղի բոլոր կազմակերպությունները լծված էին գյուղը համատարած գրագիտության վայր դարձնելուն: Չքավոր երեխաների համար կազմակերպվում էր տաք նախաճաշիկ: Երկու լիկկյաններում ու թաղական խմբակներում իրենց անգրագիտությունն էին վերացնում 98 հոգի**[10]:** 1935թ. միջնակարգ-գիշերօթիկ դպրոցում սովորելու էին գալիս մարզի այլ բնակավայրերից ևս: Դպրոցի տնօրինությունը ստիպված էր տարրական դպրոցի պարապմունքներն անցկացնել մասնավոր տներում, բարձր դասարանցիներինը երկու, անգամ՝ երեք հերթով: Արդեն 1938թ. սովորողների քանակն անցնում էր 500-ից**[11]:** Ուսումնական գործը բավականին բարձր հիմքերի վրա էր դրված, դպրոցի ՄՈՊՐ (հեղափոխության մարտիկներին

օգնելու միջազգային կազմակերպություն) 483 անդամներ բարեկամական կապեր էին ստեղծել Ֆրանսիայի ՄՈՊՐ-ի հետ՝ ցուցաբերելով նաև դրամական օգնություն**[12]:**

Իրավիճակը փոխվում է 40-ականներին: Հայրենական Մեծ պատերազմին գյուղից զինվորագրվում է 170 մարդ, զոհվում են 103-ը**[9],** նրանց հիշատակին Խութ կոչված գյուղամիջյան բլրին կառուցվել է հուշարձան, դպրոցի բակում՝ աղբյուր: Խորհրդային հայրենիքն ազատագրելու գործին են նվիրվում դպրոցի առաջամարտիկները: Մինչև պատերազմը, գյուղի 7-ամյա դպրոցի շրջանավարտ Անդրանիկ Կարապետյանը գերազանց գնահատականներով ավարտում է Ստեփանակերտի երկաստիճան դպրոցը (1930թ.) և նշանակվում Կարմիրգյուղի 7-ամյա դպրոցի տնօրեն: Այնուհետև ավարտում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնի պատմության ֆակուլտետը: Մեծ Հայրենականի առաջին իսկ օրը Ա. Կարապետյանը կամավոր մեկնում է ռազմաճակատ: Ծառայում է Թիֆլիսի օդաչուական զորամասում մինչև 1944թ.: Մարտական մի շարք առաջադրանքներ կատարելու համար նա արժանացել է բազմաթիվ կրծքանշանների ու մեդալների: Պատերազմից հետո որպես պատմության ուսուցիչ աշխատել է Ստեփանակերտի դպրոցներում, եղել է նաև պրոֆտեխուսումնարանի ուսմասվար, ապա տնօրեն**[2, էջ 148]:**

Գյուղում առանձնահատուկ հարգանքով են հիշում Հարություն, Լազր և Արամ Զաքարյան եղբայրներին: Կամավորագրված եղբայրները արցախցուն յուրահատուկ նվիրվածություն ու քաջություն ցուցաբերեցին, անմասն նվիրվեցին ու հերոսացան: Հարությունն ու Լազրը ընկան քաջի մահով: Վերջինիս կիսատ թողած գործը կրթական դաշտում կյանքի կոչեց կինը, գյուղացիների սիրելի ուսուցչուհին՝ Ռոզա Ստեփանյանը: Եղբայրներից միայն Արամը տուն վերադարձավ, ուսուցչական աշխատանքի անցավ գյուղի դպրոցում՝ դասավանդելով ռուսաց լեզու: 1962թ. ընտրվում է գյուղխորհրդի նախագահ: 1967-77թթ. նորից անցնում է ուսուցչական աշխատանքի: Պարգևատրվել է Հայրենական Պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով, մարտական ու հոբելյանական մեդալներով**[9; 2, էջ 149]:**

Հետպատերազմյան շրջանում նվազում է սովորողների քանակը: Միանշանակ, բացասական գործոնի դեր էր խաղում նաև Խորհրդային Ադրբեջանի վարած քաղաքականությունը, որը միտված էր մարզի հայաթափմանը, զուգահեռաբար՝ հայկական գյուղերում ադրբեջանցիների վերաբնակեցմանը:

80-ական թվականներին արդեն Կարմիրգյուղում խիստ նվազել էր բնակչության թվաքանակը. 1987թ-ին 198 բնակչի հաշվով միջնակարգ դպրոցում սովորում էր 62 աշակերտ՝ ներառյալ հարևան Սզնեքի ու Խաչմաչի սովորողներին**[5, էջ 130]**: Նույն թվականի հունիսի 28-ին մեծ հանդիսավորությամբ նշվեց Դոնավարգ-Կարմիրգյուղի դպրոցի հիմնադրման 120, միջնակարգի՝ 50-ամյակը: Դպրոցը կոչվեց բանաստեղծուհի Վարսենիկ Աղասյանի անունով:

1988թ. սկիզբ առած ազատագրական շարժումը լուրջ հասարակական տեղաշարժերի առիթ հանդիսացավ: Կարմիրգյուղի բնակչության թվակազմը աճեց՝ ի հաշիվ աղետալի երկրաշարժից տուժած և Ադրբեջանից փախստականի կարգավիճակ ունեցող վերաբնակիչների, փոփոխվեց նաև աշակերտների թվակազմը, սոցիալական կարգավիճակը: 1994թ. հետո՝ պայմանավորված երկրի սոցիալ-տնտեսական ծանր վիճակով, գյուղում նկատվեց արտահոսք և միգրացիա: Այս պայմաններում առաջին հարվածը ստանում է դպրոցը. 1998-99 ուստարում սովորողների թիվը հասնում է 35-ի, 2012-2013՝ 23-ի, 2014-2015՝19-ի (տեղեկությունը տրամադրել է դպրոցի տնօրինությունը):

Սկզբնավորումից միջնակարգ դպրոցի փառավոր պատմությունը կերտել են տնօրեններ Ավագ Դավթյանը (Բերդաձորից), Արմենակ Բաբայանը (նույն գյուղից), Աբրահամ Դավթյանը

(Ստեփանակերտից), Համո Քարամյանը (Նորագյուղից), Լևոն Արամյանը (ՀՀ), Բարդուղիմեոս Ասկարյանը (Սարուշենից), Սոկրատ Աբրահամյանը (Խաչմաչից), Միքայել Առաքելյանը (Սզնեքից), Շահեն Մարտիրոսյանը (Կարմիրգյուղից), Նարիման Գրիգորյանը (Կարմիրգյուղից), Միքայել Հովհաննիսյանը (Սղնախից), Շահեն Մարգարյանը (Սզնեքից), Դավիթ Գրիգորյանը (Կարմիրգյուղից), Մանվել Մխիթարյանը (Ստեփանակերտից), Մարիետա Ավետիսյանը (Կարմիրգյուղից), Արթուր Ստեփանյանը (Կարմիրգյուղից):

Տարբեր ժամանակներում գյուղի կրթական օջախում նախնական ուսում են ստացել բժշկագիտության դոկտոր-պրոֆեսոր Քրիստափոր Պետրոսյանը 1887(1889-1961)՝ նրա անմիջական միջամտությամբ և տնօրինությամբ 1946թ. Երևանում բացվում է Օրթոպեդիայի և Վերականգնողական վիրաբուժության գիտահետազոտական ինստիտուտը, գյուղի վերջին հոգևորական տեր Եղիշե-Միքայել Տեր-Մանվելյանի որդին, պատմաբան-փիլիսոփա Արմեն Մանվելովը (1906-1937, անհատի պաշտամունքի զոհ, գյուղական գրադարանը նրա անունն էր կրում): Միջնակարգ դպրոցի շրջանավարտներից են գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Էդուարդ Հայրապետյանը, բժիշկ-սրտաբան Եղիշե Աթայանը, տեխնիկական գիտությունների թեկնածու Արտաշես Հարությունյանը, ԼՂՀ ժողովրդական արտիստ Մամիկոն Միքայելյանը, բանաստեղծ Գերասիմ Հովսեփյանը և այլ նշանավոր մարդիկ:

Արցախյան գոյամարտի տարիներին նորանոր սխրանքներ են գործել դպրոցի շրջանավարտները, քաջաբար նահատակվել են Գրիգոր Ավետիսյանը (1994թ. միջնակարգ դպրոցը վերանվանվեց նրա անունով), Վոլոդյա Կարապետյանը, անհայտ կորած Էդվարդ Սարգսյանը և Գուրգեն Հարությունյանը (Կարմիր գյուղ), Գառնիկ Գրիգորյանը և Կամո Մնացականյանը (Խաչմաչ), Էդուարդ Մանասյանը և Էդուարդ Մարգարյանը (Ներքին Սզնեք):

Այսօր, երբեմնի շեն ու բարեկարգ, կրթական մեծ ավանդով հռչակված գյուղն ուխտատեղի է հիշեցնում: Գյուղ մտնող հյուրերը, այցելուները, զբոսաշրջիկները գյուղի պատմությանն ու անցյալին առնչվում են հայկականության հետքերը պահող հին կիսավեր տների յուրօրինակ ճարտարապետական լուծումների, հին թաղի պահպանված սալահատակի, վերջերս արտերկրի համագյուղացիների նյութական աջակցության շնորհիվ վերանորոգված Ս.Աստվածածին եկեղեցու խնկաբույրի, միջնակարգի կարգավիճակը պահպանող դպրոցի 18 սաների (2018թ. սեպտեմբերի տվյալներով) համար կյանքի ու գիտության անկանխատեսելի ծալքերը տանող զանգի դողանջների ելևէջներով…

Գյուղական դպրոցի առաքելությունը 21-րդ դարում էապես տարբերվում է նախորդ ժամանակաշրջանների գործունեությունից: Կրթական հաստատությունն այլևս երիտասարդությանը գյուղին կապող անբեկանելի անկյունաքարն է, գիտակից ու հայրենիքի ապագայի հանդեպ նախանձախնդիր քաղաքացու կերտման օրրանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հտ. 1, Ստեփանակերտ, 2014:
2. Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կրթական համակարգը (1923-1988թթ.) , հտ. 2, Ստեփանակերտ, 2015:
3. Բարխուդարյան Մակար, Արցախ, Բագու, 1895:
4. Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Արցախի դպրոցը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2005:

5. Մելքումյան Ս., Լեռնային Ղարաբաղ, Երևան, 1990:
6. Սուլեյմանյան Լ., Արցախի Տրնավազ գյուղի ողբերգական անցյալի մասին, «Կովկասը մեր ընդհանուր տուն» միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2017:
7. Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի Թեմը (1813-1933թթ.), գիրք Թ, Երևան, 2001:
8. Ս.Ղուկասյանի անձնական արխիվային նյութեր:
9. «Կարմիր դրոշ», N62, 1988:
10. «Խորհրդային Ղարաբաղ», N29, 1932:
11. «Խորհրդային Ղարաբաղ», N46, 1938:
12. «Խորհրդային Ղարաբաղ», N32, 1938:
13. «Ղարաբաղ», N48, 1912:
14. «Մշակ», N150, 1912:
15. monument.am:

РЕЗЮМЕ

Организация образовательного процесса в деревне Дрнаваз–Кармир Гюх (XIX-XX вв.)

Лена Сулейманян

Ключевые слова: приготовительный класс, приходская школа, строительство школ, миграция, средняя школа, количество.

В 1841 году в старой деревне Дрнаваз-Кешишкенд Арцахской провинции Варанда произведена закладка церкви Святой Богородицы, при которой начинает действовать первый приготовительный класс. Наличие церкви и школы производит просветительскую революцию в повседневной жизни деревни. С этого времени деревня Дрнаваз получает статус духовной школы среди арцахских сел. В XX веке в период тяжелых и жестоких испытаний для деревни и всего арцахского армянства в школе, из приходской ставшей средней, образовательный процесс ведется на достойном уровне. Сегодня деревня и школа вынуждены противостоять современным социально-экономическим вызовам.

SUMMARY

The organization of the Educational Process in Drnawaz–Karmir Gyugh Village (XIX-XX centuries.)

Lena Suleymanyan

Keywords: preparatory class, parish school, construction of schools, migration, secondary school, quantity.

In 1841 in the old village of Drnavaz-Keshishkend of Artsakh province of Varanda, the laying of the Church of the Holy mother of God is made, at which the first preparatory class begins to operate. The presence of a Church and school revolutionizes the daily life of the village. Since that time, the village Drnavaz gets the status of the theological school among the villages of Artsakh. In the twentieth century, in the period of hard and cruel trials for the village and the entire Artsakhi Armenians, the educational process is conducted at a decent level in the parish school, which now becomes a secondary school. Today, the village and the school are forced to confront modern socio-economic challenges.